Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
ապրիլի 13-ի N 505 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՔԵՆՔԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԻՃԱԿՆԵՐԻ

1. ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ

1. Օրգանական (ներառյալ սիմպտոմատիկ) հոգեկան խանգարումներ (FOO-FO9):
2. Հոգեկան խանգարումներ և վարքի խանգարումներ կապված հոգեակտիվ նյութերի գործածման հետ (F10-F19):
3. Շիզոֆրենիա, շիզոտիպային վիճակ և զառանցանքային խանգարումներ (F20-F29):
4. Տրամադրության (աֆեկտիվ) խանգարումներ (F30-F39):
5. Նևրոտիկ, սթրեսով պայմանավորված և սոմատոֆորմ խանգարումներ (նյարդային և մարմնաձևային խանգարումներ՝ կապված գերհոյզի հետ) (F40-F48):
6. Վարքային համախտանիշներ՝ կապված ֆիզիոլոգիական խանգարումների և ֆիզիկական գործոնների հետ (F50-F59):
7. Անձի և վարքի խանգարումներ՝ հասուն տարիքում (F60-F69):
8. Մտավոր հետամնացություն (F70-F79):
9. Հոգեբանական զարգացման խանգարումներ (F80-F89):
10. Սովորաբար մանկական և դեռահասության տարիքում սկսվող հուզական և վարքի խանգարումներ (F90-F98):

2. ՆՅԱՐԴԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

11. Էպիլեպսիա (G40, G41):

12. Գլխուղեղի և ողնուղեղի անոթային հիվանդություններ՝ խիստ արտահայտված կլինիկական խանգարումներով (G46, I60-I69):

13. Կենտրոնական նյարդային համակարգի ինֆեկցիոն (բակտերիալ, վիրուսային) և ինֆեկցիոն-ալերգիկ հիվանդությունների հետևանքներ, գլխուղեղի և ողնուղեղի օրգանական ախտահարումներ՝ ընդհանուր ինֆեկցիաների, սուր և քրոնիկ թունավորումների ժամանակ՝ ֆունկցիայի խիստ արտահայտված խանգարմամբ կամ զարգացող ընթացքով՝ ֆունկցիաների չափավոր խանգարմամբ (G09):

14. Գլխուղեղի և ողնուղեղի վնասվածքների հետևանքներ՝ ֆունկցիաների խիստ արտահայտված և չափավոր խանգարմամբ (T90.0-T90.3,T90.5-T90.9, T91.3):

15. Կենտրոնական նյարդային համակարգի բնածին արատներ (Q00-Q07):

16. Կենտրոնական նյարդային համակարգի նյարդամկանային հիվանդություններ (միոպաթիա, միասթենիա, միոտոնիա)՝ ֆունկցիաների խիստ արտահայտված կամ արագ զարգացող ընթացքով (G70-G73):

17. Կենտրոնական նյարդային համակարգի նեյրոդեգեներատիվ, դեմիելինիզացնող, աուտոիմուն և այլ բնույթի հիվանդություններ (Հանտինգտոնի հիվանդություն, Ալցհայմերի հիվանդություն, Պարկինսոնի հիվանդություն, կողմնային ամիոտրոֆիկ սկլերոզ, ցրված սկլերոզ, սիրինգոմիելիա և այլն) (G10-G14, G20-G26, G30-G32, G35-G37, G43.1,G43.8, G44.0, G45, G46, G91, G92, G94, G95.0):

18. Պերիֆերիկ նյարդային համակարգի հիվանդություններ, դրանց հետևանքներ, նաև պերիֆերիկ նյարդերի վնասվածքների հետևանքներ՝ ֆունկցիաների խիստ արտահայտված կամ արագ զարգացող ընթացքով (G50-G64):

19. Քնի խանգարումներ (G47):

3. ԱԿԱՆՋԻ, ՎԵՐԻՆ ՇՆՉԱՌԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20. Վեստիբուլյար ապարատի ֆունկցիայի խանգարում՝ Մենյերի հիվանդության նշաններով ուղեկցվող կայուն, խիստ արտահայտված վեստիբուլյար վեգետատիվ խանգարումներով (H81):

21. Երկու ականջի կայուն լրիվ խլություն կամ խուլհամրություն (H91):

4. ԱՉՔԻ ԵՎ ՆՐԱ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

22. Ակնագնդի շարժիչ նյարդի կայուն կաթված (պարալիչ)՝ դիպլոպիայով (H59, H53.2):

23. Տեսողության ֆունկցիան խախտող ծիածանաթաղանթի, եղջերաթաղանթի և աչքի այլ թաղանթների բորբոքային կամ դեգեներատիվ բնույթի քրոնիկ հիվանդություններ՝ խիստ արտահայտված տեսողական ֆունկցիայի զարգացող իջեցմամբ կամ երկու աչքում հաճախակի սրացումներով (H10 – H22):

24. Ակոմոդացիայի սպազմ կամ կաթված՝ կայուն (H 52.5):

25. Աֆակիա կամ արտիֆակիա՝ երկու աչքում (H27.0):

26. Գլաուկոմա (H50-H52):

27. Ցանցաթաղանթի շերտազատում (ցանկացած բնույթի)՝ երկու աչքում (H 53.0 – H 53.5):

28. Տեսողական նյարդի ցանկացած էթիոլոգիայի ատրոֆիա՝ տեսողական ֆունկցիայի զարգացող իջեցման դեպքում (H 58.0, H 58.1, H 58.8):

29. Տեսողության սրության իջեցում՝ կապված բեկող միջավայրերի կամ ակնահատակի կայուն փոփոխությունների, ռեֆրակցիայի, անոմալիայի կամ այլ պատճառների (վնասվածք, օրգանական հիվանդություններ և այլն) հետ, ակնագնդի բացակայություն կամ մեկ աչքում կուրություն կամ մեկ աչքում տեսողությունը՝ 0.05 և ցածր, իսկ մյուս աչքում տեսողությունը՝ 0.3-ից ցածր (H 53 - H 54 ,Q 11):

30. Ռեֆրակցիայի անոմալիաներ՝ կարճատեսություն մեկ աչքում կամ հեռատեսություն որևէ առանցքով 12.0 D-ից ավելի, մյուս աչքում՝ 6.0 D-ից ավելի (H52.0, H 52.1):

5. ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31. Մաշկի հետայրվածքային, հետվնասվածքային, հետվիրահատական տարածուն սպիներ՝ վերին վերջույթի շարժումներն զգալի չափով սահմանափակող (L90.8, L91.0, Q82.8, R20.0, R22.2):

32. Ողնաշարի և կրծքավանդակի հիվանդություններ, զարգացման արատներ, վնասվածքների հետևանքներ՝ ֆունկցիաների զգալի խանգարմամբ (M18.2, M20, M21.5, M24.5, M25.8, M43.2, M45, M50, M92.2, M95.3, Q6, E643):

33. Ձեռքի մատների կամ դաստակների դեֆորմացիաներ, վնասվածքներ (S62.7, S63.2, S64.2, S66.7, S68.4, S68.8, S69.7):

34. Վերին վերջույթի ոսկրերի, աճառների, մկանների, ջլերի ու հոդերի քրոնիկ բնածին արատներ, վնասումների հետևանքներ և քրոնիկ հիվանդություններ՝ ֆունկցիայի խիստ խանգարմամբ (Z89, Q65, Q66):

35. Վերին վերջույթի բացակայություն կամ անդամահատում (Q68.1, Q70.0, Q71.0, Q71.2, Q78.0, R26.1, S14.3, S42.3, S44, S44.2, S44.7, S48, S76.7):

6. ԽՆԴԻՐՆԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՀԵՏ

36. Խնդիրներ՝ կապված նորմալ ապրելակերպի պահպանման դժվարությունների հետ (Z73):

37. Այլ խնդիրներ կապված ապրելակերպի հետ՝ ինքնավնասումներ առաջացնող վարք (Z 72.8):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ